

Հաստատված է՝
գիտական խորհրդի

նախագահ՝

Ա.Ս. Աղաբաբյան

**ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Ֆակուլտետի խորհուրդը դեկանի նախագահությամբ գործող՝ ֆակուլտետի կառավարման մարմին է, որի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ուսանողների և աշխատակիցների համար:

2. Խորհուրդը ձևավորվում է հետևյալ կազմով՝

ա/ ի պաշտոնե անդամներ՝

դեկան /նախագահ/, ռեկտոր, /պրոռեկտորներ/, ֆակուլտետի ամբիոնների վարիչներ, ուս.խորհուրդների ներկայացուցիչներ.

բ/ անդամներ տվյալ ֆակուլտետի ուսումնական գործընթացն ապահովող ամբիոններից և այլ ֆակուլտետների ամբիոնների ներկայացուցիչներ՝ համամասնության սկզբունքով.

գ/ ուսանողության կողմից առաջադրված ներկայացուցիչներ /մինչև 25 %/. Խորհրդի կազմում կարող են ընտրվել նաև ֆակուլտետի մասնագիտական առանձնահատկություններից և անհրաժեշտությունից բխող այլ հաստատությունների ներկայացուցիչներ՝ տվյալ ֆակուլտետի ամբիոնների առաջարկությամբ և խորհրդի կողմից հաստատված:

3. Ֆակուլտետի խորհրդում քննարկվող հարցի բնույթից ելնելով՝

առաջարկությունների հիման վրա հրավիրվածներ:

Խորհրդի անդամների ընդհանուր թիվը պետք է լինի առնվազն 4, բայց ոչ ավել, քան 8. Ֆակուլտետի խորհրդի մշտական անդամների թիվը չի կարող գերազանցել ֆակուլտետի խորհրդի ընդլայնված կազմի 50%-ը:

Ընդլայնված կազմով ֆակուլտետի խորհրդի նիստը իրավասու է քննարկելու ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչների պաշտոնների և խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրման հարցերը:

4. Խորհրդի լիազորության ժամկետը 5 տարի է՝ ռեկտորի հրամանով, խորհրդի կազմի հաստատման պահից սկսած:

5. Ֆակուլտետի խորհուրդը՝

ա/ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում դեկանի, ամբիոնների վարիչների պաշտոնների թեկնածություններ՝ ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչների ընտրության կարգերին համապատասխան, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում համալսարանի ռեկտորին.

բ/ առաջադրում է համալսարանի խորհրդի անդամների թեկնածությունները

գ/ ֆակուլտետի կառուցվածքում նոր ամբիոնների, այլ ստորաբաժանումների ստեղծման, վերակառուցման և լուծարման վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում համալսարանի ռեկտորին և գիտական խորհրդին.

դ/ համալսարանի գիտական խորհրդի հաստատման և ռեկտորի հրամանագրմանն է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլաններն ու ծրագրերը.

ե/ քննարկում է ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները.

զ/ քննարկում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և որակավորման բարձրացման աշխատանքների պլանները.

է/ ամփոփում Չուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկայի արդյունքները.

ը/ յուրաքանչյուր տարի քննարկում է դեկանի հաշվետվությունը՝ ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների մասին.

թ/ կազմակերպում է պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններ զբաղեցնելու մրցույթներ՝ ըստ գործող կարգի.

ժ/ քննարկում է ֆակուլտետի լավագույն շրջանավարտների մասին ամբիոնների հաշվետվությունները:

ժա/ լուծում է ԵՄԽՅ կանոնադրությունից բխող ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

6. Ֆակուլտետի ուսումնական և գիտական աշխատանքների վերաբերյալ խորհրդի բոլոր որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ֆակուլտետի խորհուրդը քվեարկության անցկացման վերաբերյալ այլ որոշում չի ընդունում: Փակ գաղտնի քվեարկության անցկացման հիմքերը և կարգը սահմանվում է ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի և ֆակուլտետի խորհրդի ընտրությունների անցկացման ընթացակարգի համաձայն:

7. Խորհրդի քարտուղարի թեկնածությունը առաջադրվում է խորհրդի նախագահի կողմից և ընտրվում է խորհրդի յոթստուգանից: Խորհրդի քարտուղարը նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգը և խորհրդի անդամներին տեղեկացնում է այդ մասին նիստի անցկացումից առնվազն երեք օր առաջ:

8. Խորհրդի նիստը ձևակերպվում է արձանագրությամբ: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահն ու քարտուղարը:

9. Տեխնիկական կողմը /արձանագրության և խորհրդի նիստի անցկացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատրաստումը/ կատարվում է դեկանատի աշխատակազմի և հարցը ներկայացնող ամբիոնի կողմից:

10. Խորհրդի նախագահը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարման պարբերական ստուգում և խորհրդի անդամներին տեղեկացնում ընդունված որոշումների կատարման մասին:

11. Խորհրդի նիստերյո հրավիրվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:

12. Նորաստեղծ ֆակուլտետի կազմավորման կամ դեկանի բացակայության դեպքում խորհրդի նիստը վարում է տարիքով ամենաավագ անբիոնի վարիչը կամ դասախոսը:

13. Խորհրդի այլ լիազորություններ և ընթացակարգեր սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԵՄԽՅ-ի գիտական խորհուրդը կամ ֆակուլտետի խորհրդը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անձնական թեկնածուների վերաբերյալ քննարկումների որոշումները ընդունում է բաց կամ փակ /զաղտնի/ քվեարկության միջոցով:

2. Եթե քվեարկությունն իրականացվում է փակ /զաղտնի/ քվեարկությամբ.

2.1. Փակ /զաղտնի/ քվեարկություն անցկացնելու և նրա արդյունքներն որոշելու համար ԵՄԽՅ -ի գիտական խորհուրդը կամ ֆակուլտետի խորհուրդը բաց քվեարկությամբ ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի անդամների թվից ընտրում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել այն անձինք, որոնց թեկնածություններն առաջադրված են քվեաթերթիկներում:

2.2. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ:

2.3. Քվեաթերթիկները հաշվիչ հանձնաժողովին է հանձնում ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի քարտուղարը:

2.4. Մեկ թեկնածության համար քվեաթերթիկի մեջ պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը, որոնցից քվեարկողը թողնում է այն բառը, որին համաձայն է՝ ջնջելով մյուսը:

2.5. «Կողմ» և «դեմ» բառերը միաժամանակ և ջնջելու, և չջնջելու դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

2.7. Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ, այբբենական կարգով, նշվում է յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը և հայրանունը:

2.8. Հաշվիչ հանձնաժողովը՝

- քվեարկությունը սկսվելուց առաջ ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի քարտուղարից ստանում է այբբենական կարգով կազմված հաշվիչ հանձնաժողովի անդամների ցուցակը,

- կազմակերպում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը:

2.8. ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի յուրաքանչյուր անդամին տրվում է մեկ քվեաթերթիկ:

2.9. Փակ քվեարկության քվեաթերթիկները հաշվիչ հանձնաժողովը ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի անդամներին է հանձնում նրանց կողմից ցուցակում իրենց անվան դիմաց ստորագրելուց հետո:

2.10. Մեկից ավելի թեկնածուների դեպքում ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի անդամը քվեաթերթիկում թողնում է այն թեկնածուի ազգանունը, որի օգտին նա քվեարկում է, ջնջելով այն թեկնածուների ազգանունները, որոնց դեմ է քվեարկում: Քվեարկությունն ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովը բացում է փակ քվեարկության տուփը և հաշվում ձայները:

2.12. Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում թողնված են 2 և ավելի թեկնածություն:

2.13. Հաշվիչ հանձնաժողովը փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմում է քվեարկության արդյունքներն ամփոփող արձանագրություն, որը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

2.14. Քվեարկության արդյունքները ԵՄԽՅ -ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի կողմից հաստատվում են բաց քվեարկությամբ: